



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ապրիլի 2011թ. թիվ 126-Ա

ՊԵՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ  
ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. նոյեմբերի 21-ի «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդի բնակարանների բաշխման և 1999թ. հունիսի 10-ի թիվ 432 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» թիվ 1935-Ն որոշման 1 կետի «ա» ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Ըստ ստացված դիմումի ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Շահումյան 1/6 հասցեի պետական բնակարանը, որպես ընդհանուր համատեղ սեփականություն, անհատույց մասնավորեցնել դրա օգտագործման իրավունք ունեցող ընտանիքին՝ համաձայն հավելվածի:

2. Օրդեր ստացած քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ նվիրատվությամբ ծագող իրավունքները ենթակա են գրանցման Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Սպիտակի տարածքային ստորաբաժանումում:

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ԲՈՉԱՐՅԱՆ

2011թ. ապրիլի 29  
ք.Վանաձոր